ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/145»

ք. Երևան «24» դեկտեմբերի 2019թ.

«ԵՊՀ» Հիմնադրամն», ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ղազարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սանիտարական մաքրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 144 499 990 (հարյուր քառասունչորս միլիոն չորս հարյուր իննսուն ինը հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[29]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2020թ դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

---

[29] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[32] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

[32] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
«ԵՊՀ» Հիմնադրամ	«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ք. Երևան, Մարյան 20/1, բն. 69
«Արդշինբանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ 00251512
ՀՎՀՀ 01506928	«Արարատբանկ» ԲԲԸ ուս. մ/ճ
Հ/Հ 247010000906	Հ/Հ 15100129562600
Պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան	Տնօրեն՝ Գ. Ղազարյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«24» դեկտեմբերի 2019թ. կնքված
«ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/145» *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
1	90911110	Կատարողը պարտավորվում է ԵՊՀ-ի կողմից զբաղեցվող Երևան քաղաքում գտնվող տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝ իրական ացվելու են 12 ամիս, տեխնիկական բնութագիրը ներկայացվում է ստորև:	դրամ	144 494 210	1	Ք. Երևան Ալեք Մանուկյան 1	Ծառայությունների մատուցումը՝ 2020թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում: (պայմանագրի կնքման օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը)

	Կոշտ հատակների և պատշգամբների ողջ մակերեսի լվացում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Փոշու մաքրում պատուհանագոգերից			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Փոշու մաքրում շրիշակներից			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Ջեռուցման սարքերի փոշեհանում և խոնավ մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		շաբաթական 2 անգամ
	Փոշու մաքրում մալուխատար տուփերից			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր

	Անջատիչների և վարդակների մակերեսից փոշու մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Սեղանների չոր և խոնավ մաքրում	6388	հատ	1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Պահարանների, դարակաշարերի փոշու և կեղտաբծերի մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Օդորակիչների մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամսական 1 անգամ
	Ցուցանակների, տեղեկատվական վահանակների և ցուցափեղկերի կեղտաբծերի չոր և խոնավ մաքրում, փոշեհանում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր

	Միջանցքների, լսարանների, դահլիճների նկարների մաքրում փոշուց			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Փափուկ նստատեղով աթոռների, փափուկ նստատեղով և հենակով աթոռների քիմ. մաքրում	7523	հատ	1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Լվացող պրոֆեսիոնալ փոշեկուլ	տարեկան 2 անգամ և/կամ ըստ պահանջի
	Կտորե բազմոցների քիմ. Մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Լվացող պրոֆեսիոնալ փոշեկուլ	տարեկան 2 անգամ և/կամ ըստ պահանջի
	Կաշեպատ կահույքի փոշու մաքրում հատուկ միջոցների կիրառմամբ			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Լսարանների՝ 2 և ավելի նստատեղով նստարանների չոր և խոնավ մաքրում	4380	հատ	1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր

	Սենյակների և լաբորատորիաների սառնարանների մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		կեղտոտվելուն պես
	Պատերի , ջրակայուն ծածկույթով մշակված (լվացվող) պատերի կեղտաբծերի հիմնովին մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		տարեկան 2 անգամ
	Դռների կեղտաբծերի մաքրում (շրջակալների մաքրում, ապակյա տարրերի կեղտաբծերի մաքրում,մետաղական տարրերի փայլեցում)			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Աստիճանավանդակների աստիճանահարթակների համալիր մաքրում. պատերի կեղտաբծերի մաքրում, հատակների խոնավ մաքրում, փոշու մաքրում բազրիքներից			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Առաստաղների, կախովի առաստաղների և առաստաղի լուսատուների մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		տարեկան 6 անգամ

	Վերելակների, ինչպես նաև վերելակների սրահների համալիր մաքրում, հատակի ծածկի խոնավ մաքրում, դռների, պատերի, առաստաղի և կոճակների վահանակների փոշու, կեղտաբծերի և հետքերի մաքրում, հայելապատ մակերեսների և լուսային սարքերի մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Սանհանգույցների մաքրում. միզարանների, զուգարանակոնքերի, դրանց նստարանների լվացում, լվացարանների լվացում, հատակների լվացում, դռների մաքրում, դռների բռնակների ախտահանում,հայելիների և ապակե մակերեսների, մետաղական մակերևույթների մաքրում, աղբի հեռացում աղբամաններից, աղբամաններում առկա պոլիէթիլային տոպրակների փոխում, հոտազերծում	287	խցիկ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Սանհանգույցների հիմնովին ախտահանում	123	հատ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		շաբաթական 1 անգամ
	Պատուհանների հիմնովին մաքրում	10920	ք/մ	1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամսեկան 1 անգամ

	Պատուհանների կեղտաբծերի մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		կեղտոտվելուն պես
	Շերտավարագույրների մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		տարեկան 4 անգամ
	Ջահերի մաքրում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		տարեկան 4 անգամ
	Սենյակային բույսերի խնամք (ջրել)					ամեն օր
	Գրքերի փոշեհանում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		գրադարան՝ ամեն օրյա փոշեհանում, գրապահոց՝ օրական ոչ պակաս քան 250 հատ, պրոֆեսիոնալ փոշեկուլով

	Միջատների դեմ միջոցների կիրառում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ըստ պահանջի
	Միջանցքների հատակների հիմնավոր լվացում՝ հատակի լվացման մեքենայի կիրառմամբ			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	ամեն օր
	Կենտրոնական սրահների ընթացիկ մաքրում. կեղտաբծերի և փոշու մաքրում, հատակների լվացում՝ հատակի լվացման մեքենայի կիրառմամբ			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	ամեն օր
	Մուտքային դռների և ապակիների մաքրում մատնահետքերի և կեղտաբծերի հեռացում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Մարմարապատ սրահների բյուրեղացում (կրիստալիզացիա)			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 1 անգամ
	Գրանիտե հատակների բյուրեղացում (կրիստալիզացիա)			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 1 անգամ

	Սալիկապատ հատակների խորը մաքրում և լվացում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 2 անգամ
	Վինիլե հատակների լվացում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 2 անգամ
	Հուշարձանների լվացում	21	հատ	1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 4 անգամ և/կամ ըստ պահանջի
	Շենքերի արտաքին ապակեպատ մակերեսների լվացում (երկկողմանի) քիմիական միջոցներով հատուկ տեխնիկայի կիրառմամբ	1240	ք/մ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Պատուհանները լվացնող բարձր ճնշման սարք, որն անցնում է թորման 4 փուլ/ կամ համարժեքը	տարեկան 4 անգամ
	Շենքերի պատերի լվացում բարձր ճնշման սարքավորումով			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 1 անգամ
	Տանիքի տարածքի մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի		տարեկան 2 անգամ և/կամ ըստ պահանջի

				քանակ/կամ համարժեքը/		
	Բակային տարածքի մաքրում. բակային տարածքի պատշաճ վիճակի ապահովում, լուսամփոփների լվացում և մաքրում, աղբարկղերից աղբի տեղափոխում և աղբամանների մաքրում և լվացում, ետնաբակի տարածքի մաքրում, տարածքի մաքրության պահպանում, մասնաշենքերի մուտքերի մաքրության պահպանում,այդ թվում՝ ըստ եղանակի չոր տերևների և ձյան մաքրման աշխատանքներ:			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Բակային տարածքի հիմնովին լվացում ջրցան մեքենայի կիրառմամբ					ամսական 1 անգամ
	Մասնաշենքերի արգելափակիչների մաքրում	5	հատ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Աղբամանների լվացում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր

	Աղբամանների աղբի հեռացում և դրանցում առկա պոլիէթիլային տոպրակների փոխում			1 հատ մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Անվտանգության ծառայության աշխատակիցների սենյակների համալիր մաքրում. հատակի խոնավ մաքրում, կեղտաբծերի մաքրում և կահույքի փայլեցում, աղբամանների աղբի դուրսբերում	14	հատ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Արհեստանոցների համալիր մաքրում. չոր և խոնավ մաքրում, աղբամանների աղբի դուրսբերում, լվացարանների և սանհանգույցների լվացում և ախտահանում, սեղանների և պահարանների մաքրում փոշուց և կեղտաբծերից			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Լսարանների համալիր մաքրում. հատակի լվացում, սեղանների, աթոռների մաքրում փոշուց և կեղտաբծերից, աղբի դուրսբերում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Ընթերցասրահների համալիր մաքրում. հատակի լվացում, սեղանների, աթոռների մաքրում փոշուց և կեղտաբծերից, աղբի դուրսբերում	16		1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր

	Դահլիճների համալիր մաքրում. հատակի լվացում, աղբի հավաքում և դուրսբերում, ապակյա մակերեսների փայլեցում, սեղանների, աթոռների, կահույքի մակերեսի մաքրում, փոշու հեռացում	13	հատ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Թանգարանի համալիր մաքրում. հատակի լվացում, աղբի հավաքում և դուրսբերում, ապակյա մակերեսների փայլեցում, սեղանների, աթոռների, կահույքի մակերեսի մաքրում, փոշու հեռացում	1	հատ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Չօգտագործվող տարածքների հատակների խոնավ մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		տարեկան 4 անգամ
	Բոլոր գորգային ծածկույթների մաքրում փոշեկուլով			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	ամեն օր
	Գորգերի քիմ. մաքրում	460	ք/մ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 4 անգամ
	Կովրոլինի քիմ. մաքրում	1480	ք/մ	1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի	Հատուկ սարքավորումով/ կամ համարժեքը	տարեկան 4 անգամ

				քանակ/կամ համարժեքը/		
	Շինարարական և վերանորոգման աշխատանքների ընթացքում և ավարտելուն պես ընթացիկ և հիմնովին մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		կեղտոտվելուն պես և/կամ ըստ պահանջի
	Սպորտ մասնաշենքի լսարանների, սենյակների, մարզադահլիճների, մարզասարքերի չոր և խոնավ մաքրում, հանդերձարանների լոգախցիկների ախտահանում և մաքրում: Աշխատանքային ժամերի պահպանումը պարտադիր նախապայման է: 07:00-17:00			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Հրաձգարանի ողջ տարածքի մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		կեղտոտվելուն պես և/կամ ըստ պահանջի
	Աստղադիտարանի լսարանների,նստարանների,կահույքի, սենյակներում առկա գույքի, պահարանների, պատուհան-ների,առաստաղի, սանհանգույցի, հարակից տարածքի մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր

	Ավտոպարկի մաքրում			1 մ² մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		ամեն օր
	Հանրակացարան՝ Մասնաշենքերի քանակը- 2 Հարկերի քանակը- 7 Ընդհանուր մակերեսը՝ 7626 ք/մ, որից՝ 142 հատ ուսանողական սենյակ՝ 3360 ք/մ ընդհանուր մակերեսով, 20 հատ խոհանոց 400 ք/մ ընդհանուր մակերեսով, միջանցք՝ 960 ք/մ ընդհանուր մակերեսով աստիճանավանդակ՝ 196 ք/մ ընդհանուր մակերեսով 2 մուտք՝ 630 ք/մ ընդհանուր մակերեսով պահեստային մաս հարակից տարածք 2080 ք/մ ընդհանուր մակերեսով ա) Ամենօրյա մաքրման ծառայություններ - ապակիների, բռնակների, պատերի,			1 մ2 մաքրելու համար պետք է օգտագործել սահմանված նորմերով պահանջվող համապատասխան նյութի քանակ/կամ համարժեքը/		

	վարդակների, դռների, ջեռուցման մարտկոցների և պատուհանագոգերի, գույքի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում, -բակերի, նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում, -վերելակների մաքրում - սանհանգույցների մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լոգախցիկների, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/					

	- աղբամանների դատարկում, մաքրում, աղբի տոպրակների տեղադրում աղբամանների համար, շենքից աղբի հեռացում, - սալիկապատ հատակի մաքրում, - նախամուտքի մաքրում, ձմռան ընթացքում նախամուտքից ձյան և մերկասառույցի հեռացում : ա) Ըստ պահանջի մաքրվող տարածքներ, - խորհրդակցության սենյակի մաքրում ըստ պահանջի, -պահեստային մասի մաքրում շաբաթական 2 անգամ -սենյակների մաքրում շաբաթական 2 անգամ: բ) Ըստ պահանջի մաքրման ծառայություններ -յուրաքանչյուր սենյակի հիմնովին մաքրում՝ հանձնելուն պես -սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ եվրոպական արտադրության կան դրան համարժեք, - սալիկապատ հատակների լվացում բարձրորակ մասնագիտացված					

	հատուկ նյութերով՝ եվրոպական արտադրության կամ դրան համարժեք, -կահույքի մաքրում և փայլեցում կահույք մաքրող միջոցով եվրոպական արտադրության կամ համարժեքը: Կատարողը պետք է մաքրման աշխատանքներն իրականացնի յուրաքանչյուր աշխատանքային օր: Տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողն աշխատանքային օրերին պետք է ապահովի հերթապահություն՝ հետևյալ աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, Հիմնական աշխատակիցների ներկայություն՝ հետևյալ աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-12:00 ժամանակահատվածում, Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերը, մաքրման լաթերը և սարքավորումներն ամբողջությամբ պետք է ապահովվեն Կատարողի կողմից: Կատարողը պետք է իրականացնի շենքերին պատկանող հարակից տարածքների մաքրում:					

	Հյուրատան՝ սենյակների, սենյակներում առկա գույքի, կահույքի, լոգախցիկների, միջանցքների, աստիճանավանդակների, պահեստային մասի, պատուհանների մաքրում: Աշխատանքային ժամերը՝ 8:00-17:00			Սպասարկվող սենյակներում, լոգարաններում անրաժեշտ է ապահովել հյուրանոցային ոլորտին և չափանիշներին համապատասխան՝ զուգարանի թուղթ՝ երկշերտ (լավ որակի), հեղուկ օճառ, շամպուն, ձեռքի թղթյա անձեռոցիկ, անձեռոցիկ, օճառ և ախտահանման համար անհրաժեշտ բոլոր տնտեսական պարագաներն ու նյութերը		ամեն օր

	Մասնաշենքերում կատարվող աշխատանքներ, այդ թվում հարակից տարածքների համալիր մաքրում			
	Անվանում	Ք/Մ	Նկուղ ք/մ	Հասցե
1	Կենտրոնական մասնաշենք	10391	1699.5	Ալեք Մանուկյան 1
2	Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան	9512	1188.6	Ալեք Մանուկյան 1
3	№1 մասնաշենք	10080	282.6	Ալեք Մանուկյան 1

4	№2 մասնաշենք	4067	373.5	Ալեք Մանուկյան 1
5	№3 մասնաշենք	4844	735	Ալեք Մանուկյան 1
6	№4 մասնաշենք	15057	3945	Ալեք Մանուկյան 1
7	№ 5 մասնաշենք	4746	1123	Ալեք Մանուկյան 1
8	№6 մասնաշենք	6639	797	Աբովյան 52
9	№7 մասնաշենք	7458	901.1	Ալեք Մանուկյան 1
10	№8 մասնաշենք	6000		Աբովյան 52
11	Մարզահամալիր/ Հրաձգարան	7283	331	Ալեք Մանուկյան 1
	Հրաձգարան	750		Ալեք Մանուկյան 1
12	Սպորտ ամբիոն	1250		Ալեք Մանուկյան 1
13	Ավտոպարկ	400		Ալեք Մանուկյան 1
14	Աստղադիտարան	250	101	Ղ.Ղուկասյանի այգի

15	Կիևյան 1 ա	2245	220.3	Կիևյան 1 ա
16	Հանրակացարան	5546	2080	Ծ. Աղբյուր 55 ա
17	Հյուրատուն	1055		Ալեք Մանուկյան 1
	Ընդամենը	97573	13777.6	
18	Բակային տարածք	32000		

Տեխնիկական Մասնագրեր

1. Ընտրված հայտատուն ծառայությունների մատուցման ընթացքում իր աշխատակիցների հետ միասին պետք է պատշաճ վերաբերմունք ցուցաբերի Պատվիրատուի գույքի նկատմամբ, աշխատակիցներին, հյուրերին և ուսանողներին:
2. Ընտրված Հայտատուն Պատվիրատուի պահանջով պետք է հնարավորինս կարճ ժամկետներում իր միջոցներով վերացնի ծառայության բոլոր թերությունները:
3. ԵՊՀ-ի կողմից լիազորված աշխատակիցը իրավասու է ստուգել ընտրված Հայտատուի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը:
4. Ընտրված Հայտատուն պետք է նեկայացնի ալպինիստների սերտիֆիկացումը հավաստող փաստաթուղթ:
5. Ընտրված Հայտատուն պետք է իր աշխատակիցներին տրամադրի բոլոր տեխնիկական միջոցները, գործիքները, սարքավորումները, նյութերը, մաքրող նյութերը և արտահագուստը, որոնք անհրաժեշտ են մաքրման ծառայությունների մատուցման համար:
6. Մաքրման ծառայությունների իրականացման համար բոլոր օգտագործվող մաքրող միջոցները (մաքրող, ախտահանող և այլն), պետք է համապատասխանեն եվրոստանդարտների պահանջներին:

7. Ընտրված Հայտատուն պետք է անվճար տրամադրի աղբի տոպրակներ՝ 30 լ., 60 լ., 120 լ., ԵՊՀ-ի բոլոր տարածքների համար: Տոպրակները պետք է փոխվեն ամեն օր:
8. Ընտրված հայտատուն պարտավորվում է բոլոր սանհանգույցներում տեղադրել օդափոխիչներ:
10. Մաքրությունը պատշաճ որակի կազմակերպելու խստիվ պայման է հանդիսանում որակյալ մաքրման միջոցների օգտագործումը, որի հավաստիությունը ստուգելու նպատակով ընտրված Մատակարարը պետք է տրամադրի մանրամասն տեղեկատվություն ապրանքատեսակի ծագման մասին հավաստագիր ողջ պատվերի ներմուծվող ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի համար: Հավաստագրերը պետք է ներկայացվեն համապատասխան հաշիվ ապրանքագրերի և այլ անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի հետ միասին:
11. Ընտրված մասնակիցը պետք է ապահովի կորդինացնող աշխատակցի/մենեջերի կամ աշխատակիցների/մենեջերների ներկայությունը մասնաշենքերում, աշխատանքային գործընթացը և տվյալ տարածքում աշխատողների աշխատանքը վերահսկելու նպատակով:
12. Հայտատուները պետք է տեղեկատվություն տրամադրեն իրենց ընկերության ունեցած շնորհված հավաստագրերի վերաբերյալ և ունենան առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:
13. Ընտրված մասնակիցը պարտավորվում է տրամադրել մասնաշենքերում՝ զուգարանի թուղթ, հեղուկ օճառ, ձեռքի թղթյա սրբիչներ (հաշվի առնել 1 անձի օրական օգտագործման միջին ծախսը)

Պ ա տ վ ի ր ա տ ու
«ԵՊՀ» Հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
Դրոնեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 20/1, բն. 69
ՀՎՀՀ 00251512
«Արարատբանկ» ԲԲԸ ուս. մ/ճ
Հ/Հ 15100129562600
Տնօրեն՝ Գ. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«24» դեկտեմբերի 2019թ. կնքված
«ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/145» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	
1	Սանիտարական մաքրության ծառայություն	90911110	Նախատեսվում է ֆինանսավորել պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով:

Պ ա տ վ ի ր ա տ ու
«ԵՊՀ» Հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
Պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 20/1, բն. 69
ՀՎՀՀ 00251512
«Արարատբանկ» ԲԲԸ ուս. մ/ճ
Հ/Հ 15100129562600
Տնօրեն՝ Գ. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ